# *1.2. Ա Ր Տ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն (Ծ Ա Ռ Ա Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր)*

## *1.2.1. Արդյունաբերություն*

***Արդյունաբերական արտադրանքի ծավալը և իրացումը:*** 2012թ. հունվար-մարտին հանրապետությունում, փաստացի գներով, թողարկվել է 9606.7 մլն դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 9495.0 մլն դրամի պատրաստի արտադրանք, որից՝ ԱՊՀ երկրներում՝ 3158.7 մլն դրամի, այլ երկրներում՝ 99.8 մլն դրամի արտադրանք: ԱՊՀ երկրներում իրացված արտադրանքի ծավալը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ կազմել է 50.8 տոկոս, իսկ այլ երկրներում՝ 209.7 տոկոս:

2011թ. հունվար-մարտի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 97.7 տոկոս, իսկ առանց էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման՝ 90.8 տոկոս:

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում պետական և ոչ պետական հատվածների տնտեսավարող սուբյեկտների կողմից թողարկված արտադրանքի տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար՝ 34.4 տոկոս և 65.6 տոկոս՝ 2011թ. հունվար-մարտի համապատասխանաբար 26.1 և 73.9 տոկոսի դիմաց:

*Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան ըստ ամիսների՝*
*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ,տոկոսով*




*Արդյունաբերական արտադրանքի դինամիկան ըստ ամիսների*

*/տոկոսներով/*

| | նախորդ ամսվա նկատմամբ | նախորդ տարվա համապա-տասխան ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) | նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ |
|---|---|---|---|
| 2011թ. | | | |
| հունվար | 63.8 | 108.1 | 63.8 |
| փետրվար | 110.9 | 106.0 | 70.8 |
| մարտ | 107.9 | 104.8 | 76.4 |
| ապրիլ | 94.5 | 103.2 | 72.2 |
| մայիս | 92.5 | 103.5 | 66.8 |
| հունիս | 95.7 | 104.4 | 63.9 |
| հուլիս | 101.4 | 102.1 | 64.8 |
| օգոստոս | 96.3 | 100.3 | 62.4 |
| սեպտեմբեր | 116.6 | 100.9 | 72.7 |
| հոկտեմբեր | 87.0 | 100.6 | 63.3 |
| նոյեմբեր | 108.5 | 100.3 | 68.7 |
| դեկտեմբեր | 137.6 | 100.8 | 94.5 |
| 2012թ. | | | |
| հունվար | 56.3 | 96.8 | 56.3 |
| փետրվար | 107.2 | 100.1 | 60.4 |
| մարտ | 115.4 | 97.7 | 69.7 |

*Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն*
*ըստ տնտեսական գործունեության հիմնական տեսակների*

*/մլն դրամ/*

| | Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, փաստացի գներով[1] | Պատրաստի արտադրանքի իրացումը, փաստացի գներով[1] | Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, տոկոսով |
|---|---|---|---|
| ***Ամբողջ արդյունաբերությունը*** | ***9606.7*** | ***9495.0*** | ***97.7*** |
| *այդ թվում`* | | | |
| ***հանքագործական արդյունաբերություն*** | ***2551.4*** | ***2563.8*** | ***67.3*** |
| *որից`* | | | |
| մետաղե հանքաքարերի արդյունահանում | 2481.4 | 2494.0 | 66.8 |
| հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր | 70.0 | 69.8 | 91.9 |
| ***մշակող արդյունաբերություն*** | ***3574.0*** | ***3449.9*** | ***120.9*** |
| *որից`* | | | |
| սննդամթերքների, ներառյալ խմիչքների արտադրություն | 2391.1 | 2456.8 | 113.1 |
| հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում | 48.1 | 35.3 | 80.2 |
| կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշկեղենի արտադրություն | 197.0 | 170.8 | 121.2 |
| բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն | 70.9 | 70.9 | 2.6 անգ |
| հրատարակչական և պոլիգրաֆիական գործունեություն, գրանցված տեղեկատվություն պարունակող կրիչների բազմացում | 42.9 | 42.6 | 97.7 |
| ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն | 146.1 | 3.9 | 2.1 անգ |
| այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն | 336.7 | 337.8 | 132.3 |
| պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն | 59.3 | 50.9 | 81.1 |
| մեքենաների և սարքավորանքի արտադրություն | 3.4 | 3.4 | 121.4 |
| ռադիոյի, հեռուստատեսության և կապի համար սարքավորանքի արտադրություն | 4.0 | 3.1 | 64.5 |
| բժշկական սարքավորանքի, չափիչ և օպտիկական սարքերի և ժամացույցների արտադրություն | 92.1 | 92.1 | 3.5 անգ |
| կահույքի և ուրիշ խմբավորումներում չներառված այլ արտադրատեսակների արտադրություն | 182.4 | 182.3 | 155.8 |
| ***Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում*** | ***3481.3*** | ***3481.3*** | ***112.7*** |
| *դրանից`* | | | |
| Էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում | 3481.3 | 3481.3 | 112.7 |
| *որից`* | | | |
| էլեկտրաէներգիայի արտադրություն և բաշխում | 1900.5 | 1900.5 | 111.7 |
| գազի արտադրություն, գազակերպ վառելիքի բաշխում խողովակաշարերով | 1372.5 | 1372.5 | 114.4 |
| գոլորշու և տաք ջրի մատակարարում | 138.5 | 138.5 | 126.6 |
| ջրի հավաքում, մաքրում և բաշխում | 69.8 | 69.8 | 89.9 |

[1] *Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:*

*Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն*
*ըստ արտադրության սեկտորների 2012թ. հունվար-մարտին*



*Մշակող արդյունաբերություն*




1. սննդամթերքների, ներառյալ խմիչքների արտադրություն
2. հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում
3. կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշկեղենի արտադրություն
4. բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն
5. հրատարակչական և պոլիգրաֆիական գործունեություն, գրանցված տեղեկատվություն պարունակող կրիչների բազմացում
6 .ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն
7. այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն
8. պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն
9. մեքենաների և սարքավորանքի արտադրություն
10. ռադիոյի, հեռուստատեսության և կապի համար սարքավորանքի արտադրություն
11. բժշկական սարքավորանքի, չափիչ և օպտիկական սարքերի և ժամացույցների արտադրություն
12. կահույքի և ուրիշ խմբավորումներում չներառված այլ արտադրատեսակների արտադրություն

*Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում*




Տարածքային կտրվածքով նախորդ տարվա հունվար-մարտի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի արտադրության ծավալն ավելացել է Ստեփանակերտ քաղաքում և բոլոր շրջաններում, բացի Մարտակերտի շրջանից:

Հարկ է նշել, որ ք. Ստեփանակերտում և Մարտակերտի շրջանում գործող արդյունաբերական կազմակերպությունների կողմից թողարկվել է ընդհանուր արդյունաբերական արտադրանքի համապատասխանաբար 58.2 և 27.0 տոկոսը՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 44.8 և 47.4 տոկոսի փոխարեն: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ արդյունաբերական արտադրանքի տարածքային կառուցվածքում աճել են Ստեփանակերտ քաղաքի (13.4 տոկոսային կետով), Ասկերանի (1.8 տոկոսային կետով), Հադրութի (0.7տոկոսային կետով), Մարտունու (3.6տոկոսային կետով), Շուշիի (0.1 տոկոսային կետով) և Քաշաթաղի շրջանների (0.8 տոկոսային կետով) արդյունաբերական կազմակերպությունների կողմից թողարկված արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռները:

Մարտակերտի շրջանի արդյունաբերական կազմակերպությունների կողմից թողարկված արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը նվազել է 20.4 տոկոսային կետով:

*Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ հանրապետության շրջանների 2012թ. հունվար-մարտին*




2012թ. հունվար-մարտին թողարկված 9606.7 մլն դրամի արտադրանքի դիմաց իրացվել է 9495.0 մլն դրամի պատրաստի արտադրանք կամ 98.8 տոկոսը:

*Արդյունաբերական արտադրանքի իրացվելիությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների (տոկոսներով)*




1 Ամբողջ արդյունաբերություն
2 Հանքագործական արդյունաբերություն
3 մետաղե հանքաքարերի արդյունահանում
4 հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր
5 Մշակող արդյունաբերություն
6 սննդամթերքների, ներառյալ խմիչքների արտադրություն
7 հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում
8 կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշկեղենի արտադրություն
9 բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն
10 հրատարակչական և պոլիգրաֆիական գործունեություն, գրանցված տեղեկատվություն պարունակող կրիչների բազմացում
11 ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն
12 այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն
13 պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն
14 մեքենաների և սարքավորանքի արտադրություն
15 ռադիոյի, հեռուստատեսության և կապի համար սարքավորանքի արտադրություն
16 բժշկական սարքավորանքի, չափիչ և օպտիկական սարքերի և ժամացույցների արտադրություն

17 կահույքի և ուրիշ խմբավորումներում չներառված այլ արտադրատեսակների արտադրություն

18 Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում

Տնտեսական գործունեության տեսակների կտրվածքով իրացվելիության բարձր մակարդակ է արձանագրվել սննդամթերքների, ներառյալ խմիչքների արտադրության, հանքագործական արդյունաբերության, մետաղե հանքաքարերի արդյունահանման և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության բնագավառներում, որտեղ իրացված արտադրանքի հարաբերակցությունը թողարկված արտադրանքի ծավալի նկատմամբ կազմել է համապատասխանաբար՝ 102.7, 100.5, 100.5 և 100.3 տոկոս: Մյուս կողմից, տվյալ ցուցանիշի նվազագույն մակարդակ է արձանագրվել ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրության բնագավառում՝ 2.7 տոկոս:

2012թ. հունվար-մարտին արդյունաբերական արտադրանքի արտադրությունը և իրացումն ըստ շրջանների բնութագրվում են հետևյալ տվյալներով.

*Արդյունաբերական արտադրանքի արտադրությունը և իրացումն ըստ շրջանների*
*2012 թ. հունվար-մարտին*

*/մլն դրամ/*

| | Արտադրանքի /աշխատանքների, ծառայությունների/ ծավալը, փաստացի գներով | Պատրաստի արտադրանքի իրացումը, փաստացի գներով | Իրացված արտադրանքը տոկոսներով թողարկված արտադրանքի ծավալի նկատմամբ |
|---|---|---|---|
| Ընդամենը | ***9606.7*** | ***9495.0*** | ***98.8*** |
| *այդ թվում՝* | | | |
| ք.Ստեփանակերտ | 5589.6 | 5595.0 | 100.1 |
| Ասկերան | 460.4 | 335.5 | 72.9 |
| Հադրութ | 221.8 | 229.0 | 103.2 |
| Մարտակերտ | 2589.8 | 2605.2 | 100.6 |
| Մարտունի | 536.5 | 521.7 | 97.2 |
| Շահումյանի | 3.0 | 3.0 | 100.0 |
| Շուշի | 34.8 | 34.8 | 100.0 |
| Քաշաթաղ | 170.8 | 170.8 | 100.0 |

*Արդյունաբերական արտադրանքի իրացվելիության մակարդակն*
*ըստ շրջանների (տոկոսներով)*




Տարածքային կտրվածքով իրացվելիության ամենացածր մակարդակը դիտվել է Ասկերանի շրջանում՝ 72.9 տոկոս:

2012թ. հունվար-մարտին արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ աճել է 8.4 տոկոսով: Աճ է արձանագրվել հանքագործական արդյունաբերությունում՝ 1.8, մշակող արդյունաբերությունմում՝ 9.8, և էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ոլորտում՝ 10.7 տոկոսներով:

*Արդյունաբերությունում զբաղվածների միջին ցուցակային թվաքանակը*
*2011-2012 թթ. հունվար-մարտին*

*/համապատասխան ժամանակաշրջանի միջին ցուցակային թիվը, մարդ/*

| | 2011թ. հունվար-մարտ | 2012թ. հունվար-մարտ | Դինամիկայի ինդեքսը (տոկոսներով) |
|---|---|---|---|
| Ամբողջ արդյունաբերությունը | **5144** | **5575** | **108.4** |
| *այդ թվում՝* | | | |
| Հանքագործական արդյունաբերություն | 1105 | 1125 | 101.8 |
| Մշակող արդյունաբերություն | 2273 | 2495 | 109.8 |

| | 2011թ. հունվար-մարտ | 2012թ. հունվար-մարտ | Դինամիկայի ինդեքսը (տոկոսներով) |
|---|---|---|---|
| էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում | 1766 | 1955 | 110.7 |

Մեկ աշխատողի կողմից արտադրված արտադրանքն արդյունաբերական կազմակերպություններում 2012թ. հունվար-մարտին կազմել է 1723.2 հազ. դրամ և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 188.5 հազ. դրամով կամ 9.9 տոկոսով:

*Արդյունաբերական արտադրանքի արտադրության և իրացման ծավալները, ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի*, 2012թ. հունվար-մարտին*

| | Տնտեսավարող սուբյեկտների քանակը | Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ | Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, մարդ | Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ | Թողարկված արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով, մլն.դրամ | Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ | Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, մլն դրամ | Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը ԼՂՀ** | **268** | **100.0** | **5575** | **100.0** | **9606.7** | **100.0** | **9495.0** | **100.0** |
| *այդ թվում՝* | | | | | | | | |
| մինչև 5 մարդ գերփոքր) | 169 | 63.1 | 410 | 7.4 | 320.6 | 3.3 | 312.9 | 3.3 |
| 6-50 մարդ (փոքր) | 85 | 31.7 | 1400 | 25.1 | 2350.0 | 24.5 | 2287.7 | 24.1 |
| 51-100 մարդ (միջին) | 4 | 1.5 | 285 | 5.1 | 328.2 | 3.4 | 322.9 | 3.4 |
| 101 և ավելի մարդ (խոշոր) | 10 | 3.7 | 3480 | 62.4 | 6607.9 | 68.8 | 6571.5 | 69.2 |

**)Սույն բաշխվածությունը իրականացված է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ԼՂՀ օրենքի համաձայն:*

Արդյունաբերական կազմակերպությունների ընդհանուր քանակում գերակշռել են գերփոքր և փոքր կազմակերպությունները, որոնց տեսակարար կշիռները կազմել են, համապատասխանաբար՝ 63.1 և 31.7 տոկոս: Հատկանշական է, որ վիճակագրական մոնիթորինգում ընդգրկված 94.8 տոկոս կազմող գերփոքր և փոքր կազմակերպությունները թողարկել են արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի 27.8 տոկոսը, այն դեպքում, երբ կազմակերպությունների ընդհանուր թվաքանակում 5.2 տոկոս կազմող միջին և խոշոր կազմակերպություններին բաժին է ընկել արդյունաբերական արտադրանքի ամբողջ ծավալի 72.2 տոկոսը:

## *Սպառողական ապրանքների արտադրության ծավալը*

*/հաշվետու տարվա համադրելի բացթողնման գներով, մլն դրամ/*

| | 2011թ. հունվար-մարտ | Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ | 2012թ. հունվար-մարտ | Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ | Դինամիկայի ինդեքսը (տոկոսներով) |
|---|---|---|---|---|---|
| **Սպառողական ապրանքներ, ընդամենը** | **2155.4** | **100.0** | **2232.8** | **100.0** | **103.6** |
| *այդ թվում՝* | | | | | |
| պարենային ապրանքներ | 1931.4 | 89.6 | 1956.9 | 87.6 | 101.3 |
| ոգելից խմիչքներ | 209.6 | 9.7 | 238.7 | 10.7 | 113.9 |
| ոչ պարենային ապրանքներ, ընդամենը | 14.4 | 0.7 | 37.2 | 1.7 | 2.6 անգ |
| *այդ թվում՝* | | | | | |
| թեթև արդյունաբերության | 0.8 | 0.1 | - | - | - |
| մշակութակենցաղային և տնտեսական նշանակության | 13.6 | 0.6 | 37.2 | 1.7 | 2.7 անգ |

*Ծանոթություն.* սպառողական ապրանքները հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:

Հաշվետու ժամանակահատվածում սպառողական ապրանքների արտադրության ծավալը կազմել է 2232.8 մլն դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 2155.4 մլն դրամի դիմաց և աճել է 3.6 տոկոսով:

*Հիմնական ապրանքատեսակների արտադրության դինամիկան (բնեղեն արտահայտությամբ)*

| | Չափման միավորը | 2011թ. հունվար-մարտ | 2012թ. հունվար-մարտ | Աճի տեմպը, տոկոսով |
|---|---|---|---|---|
| Էլեկտրական էներգիայի արտադրությունը (սեփական արտ.) | մլն կվտ/ժ | 32.1 | 28.7 | 89.4 |
| Մշակութակենցաղային նշանակության ապրանքներ* | հազ.դրամ | 42769.8 | 88333.5 | 2.1 անգ |
| *որից՝ կ աh ո ւ յ ք* | *հազ.դրամ* | *42769.8* | *88333.5* | *2.1 անգ* |
| Գաջ | տ | 911.0 | 983.4 | 107.9 |
| Շինաքար | ք.մ | 317.6 | 442.4 | 139.3 |
| Բետոն | խ.մ | 3824.4 | 4109.6 | 107.5 |
| Ավազ | խ.մ | 5564.0 | 3599.0 | 64.7 |
| Խիճ | խ.մ | 5298.0 | 5288.0 | 99.8 |
| Երեսապատման սալեր | ք.մ | 3017.2 | 3993.5 | 132.4 |
| Մարմարե բլոկներ | խ.մ | 27.0 | 55.0 | 2.0 անգ |
| Եզրային քարեր | գծ.մ. | 785.1 | 1072.7 | 136.6 |
| Պատուհանի կառուցահատված (բլոկ) | ք.մ | 1825.4 | 854.5 | 46.8 |
| *որից՝ ալյումինի կառուցվածքներ* | ք.մ | *1825.4* | 845.4 | 46.3 |
| Դռների կառուցահատված | ք.մ | 1154.9 | 706.6 | 61.2 |
| Կարած ապրանքներ | հազ.դրամ | 59998.4 | 48061.0 | 80.1 |
| Կոշիկ | հազ.զույգ | 20.3 | 23.6 | 116.3 |
| Կոնդենսատորներ | հազ.հատ | 3.5 | - | - |
| Խաղողի գինի | հազ.լիտր | 28.3 | 26.9 | 95.1 |
| Օղի | հազ.լիտր | 143.2 | 133.1 | 92.9 |
| *որից՝ թթի օղի* | | *9.7* | *1.4* | *14.4* |
| Կոնյակ | հազ.լիտր | 0.1 | 0.1 | 100.0 |
| Ոչ ալկոհոլային ըմպելիքներ | հազ.լիտր | 94.5 | 96.1 | 101.7 |
| Հանքային ջրեր | հազ. 0.5լ. շիշ | 2.1 | - | - |
| Միս | տ | - | 136.5 | - |
| Կարագ գյուղացիական | տ | 5.4 | 6.4 | 118.5 |
| Պանիր | տ | 11.3 | 14.4 | 127.4 |
| Կաթ | տ | 50.3 | 54.9 | 109.1 |
| Կաթնաշոռ | տ | 20.6 | 30.9 | 150.0 |
| Թթվասեր | տ | 167.0 | 175.2 | 104.9 |
| Մածուն | տ | 95.6 | 121.4 | 127.0 |
| Թան | տ | 1.2 | 3.7 | 3.1 անգ |
| Ալյուր | տ | 1709.0 | 2147.7 | 125.7 |
| Մակարոնեղեն | տ | 68.7 | 53.3 | 77.6 |
| Պոլիէթիլենային խողովակներ | հազ.գծ.մ. | 31.1 | 62.4 | 2.0 անգ |
| Կաղնե տակառներ | հազ. լիտր | - | 24.9 | - |
| Մանրատախտակ | ք.մ | 874.0 | - | - |
| Խտանյութ | թ.տ.մ. | 6659.0 | 4450.0 | 66.8 |
| | չ.տ.մ. | 6086.0 | 3979.0 | 65.4 |
| Հանքաքար | չ.տ.մ. | 85371.0 | 80436.0 | 94.2 |
| Սղոցանյութ | խ.մ | 92.3 | 127.0 | 137.6 |
| Հաց և հացաբուլկեղեն | տ | 3551.1 | 4263.9 | 120.1 |
| Պահածոներ | մլն դրամ | - | 33.7 | - |
| Հրուշակեղեն | տ | 24.0 | 25.9 | 107.9 |
| Ձավարեղեն | տ | 6.0 | - | - |